

Երկրէ երկիր իր ժողովուրդին հետ. այս է խորագիրը ժողովածուին առաջին մասին (էջ 1-105), ուր կը գծուի համապատկերը հայ գաղթաշխարհի՝ ճամբորդի տպաւորութիւններով. ընդամենը 25 կտոր, մեծ մասով գրի առնուած 1932ին եւ 1948ին. բոլորն ալ նախապէս հրատարակուած: Յայտուն եւ աշխոյժ կտորներ են, ի թարմութեամբ եւ կորովով:

Ուսումնասիրութիւնները կը կազմեն երկրորդ փունջ մը (էջ 107-184), ուր կը ցոյց Շ.ի վերլուծական եւ համադրական գրական կարողութիւնը. ինք կտոր ընդամենը, որոնցմէ երկարագոյնները Յանուն լեզուի անկախութեան եւ Արեւմտահայ մամուլին զարգացումը պիտի մնան ամէնէն հետաքրքրականները:

Գրական էջերը (185-395) կ'ամփոփեն նախ արձակներու ժողովածու մը. ապա բուն Օրեր եւ Ժամեր բաժինը (էջ 286 - 369), աւա՞ղ, կիսատ մնացած, ուր այնքան թարմութեամբ կը ներկայացնէ, կը նկարագրէ, աւելի ճիշտ՝ կը պատկերագրէ իր եւ իր սերունդին կեանքը, իր շրջանի մարդիկը, խմբագիրները, գրագէտները, անոնց զգացումն ու ապրումը, գրական ու մանաւանդ լրագրական մթնոլորտն ու եռուդեղ Պոլսոյ մէջ, չմոռնալով մինչեւ անգամ դրաքննիչ էֆէնտիները: Այս մասին մէջ է որ կը գտնենք այլուր չհրատարակուած նորութիւններ: Կը յաջորդեն 9 քերթուածներ, եւ 4 ոտանաւոր թարգմանութիւններ:

Տումսերը 25 հատ են, էջ 397-436: Խմբագրականները 111 հատ, էջ 437 - 668:

Եւ այսքան իբր նշխար մըն է որ հիմա կը տրուի մեզի. նուիրական նշխար մը անկէ, որուն անունին սկզբնատառը աւելի խօսուն է հիմա իր գերեզմանին վրայէն, իր ժողովածուին վրայէն. (ըստ իս, այս հատորին կողքին վրայ միայն Շ. կը բաւէր. աւելորդ էր սեւագրող խորագիրը եւ ամբողջական անունը. յետոյ կարծեմ գեղնորակ գոյնը աւելի Տէրեանի կը պատշաճի՝ քան մեր Շ.ին):

Եւ ի՞նչ նշխար. բանա՞նք էջ մը.

«Աշխարհամարտ. մարդկութիւնը մէկ աչքով կը քննայ 1939 Սեպտեմբերէն ի վեր: Պատերազմ: Աշխարհածաւալ «մարտ պատերազմ»:

Աշխարհամարտ: Շանթամարտ: Գեհե-նամարտ:

Արեւոյ մեռնիմ, ա՛յ իմ բարբառ մայրենի: Որքան արու, ջրալինդ, հոսուն բառեր կը ծնիս:

Գիւսմարտ: Հսկայամարտ: Գոյամարտ:

Ու տակաւին մասերու բաժնելով կամ դունաւորելով.

Ճակատամարտ: Ծովամարտ: Օդամարտ: Սովամարտ:

Ահեղ փոթորիկ, բռնած ամբողջ աշխարհամասեր: Հրարուխ համայնակու: Թաթառ: Ժաժք: Ալեկոծութիւն տիեզերական:

Ահագնադղորդ հրանօթներ ... ականարձակ պայթուցիկներ... օդանաւեր սլաքաթուր... տիտանաթեւ... հետազօտիչ... հետապնդիչ... ուղղաձիգ. ոմբաձիգ. որսկան. հորիզոնական. անդնդասող. սաւառնաթեւ. հովանոցաձեւ. բարձրահայեաց:

Կտրիճներ օդայած, օդասլաց, օդավար կամ օդաչորջիկ... օդաչուններ. օդատորմիդներ. օդարշաւներ:

Ռումբեր պայթուցիկ, ումբեր հրձիգ. խորտակիչ. ծխարձակ. բոցավառ:

Կազարգել յիմակ. անկարգել. անցարդել. օդապարիկ լուսարձակ. հրթիռներ գոյնդդոյն, լուսատու...»:

Պատերազմական գրականութիւն. որուն իբրեւ եզրակացութիւն կը յիշատակուին Ալիշանէն, Բագրատունիէն, Նարայէ-յէն ահագնադղորդ բառերու կուտակումներ, պատերազմական ազմուկ ու գնդին նկարագրող տողեր, գրուած այն շրջանին՝ երբ պատերազմը կը կատարուէր նետով, նիզակով ու պարսատիկով:

Ու տակաւին որքան ոսկի էջեր աւագի նման ցանուած թերթերու անկիւնները,

ուր կը մնան թաքուն, այս հատորին լոյս տեսնելէն վերջն ալ:

Կատարելապէս տիրացած մեր լեզուին գաղտնիքներուն, ճաշակն ու գիւրութիւնը ունէր նորահնար բառերով եւ գիւտաւոր բարդութիւններով թարգմանել Կերոպա-կան արդի բացատրութիւնները: Շատ օգտակար գործ մը պիտի ըլլար՝ եթէ մէկը աշխատանքի լծուէր այս ուղղութեամբ, Շ.ի բառարանը վերակազմէր:

Լսած եմ թէ հայերէն ասութիւններու բառարան մը կամ հաւաքածոյ մըն ալ ունէր. հաւանօրէն ան ալ տակաւին կը մնայ իր թղթածրարներուն մէջ, բարեբախտաբար գուրգուրոտ ձեռքերու մէջ:

Շնորհալին Ա. Բ. Գ.ի վրայ փոքրիկ ոտանաւորներ ունի. մէկուն վերնագիրն է « Խրատ ուսումնականաց մանկանց ի դիմաց այբբենից տառից ոտանաւոր տաղիւ չափոյ ». ու գիտէ՞ք թէ ինչ գըրած է Շ.ին գիմաց: Ե տառն է որ կը խօսի.

Դու իմաստնոց լեր հետեւող,
Որք առ իմաստըն փափաքող
Մինչեւ ի մահ եղեն ձգնող:

Շնորհալիէն 800 տարի վերջ յայտնուեցաւ այդ Շ.:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ



ԵՂԻՇԵԻ ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ. Հրատարակեց՝ Ե. Տէր Մինասեան: Լաքալիպով, մեծ ուրա-ծալ, էջ 226: Երեւան, 1957: Գին՝ կազմով 16 ո. 50 կ.:

Եղիշէի ընտիր եւ գիտական հրատարակութիւնը կ'ունենանք վերջապէս, կատարուած ձեռագիրներու խղճամիտ բաղ-դատութեամբ:

Սկիզբը խղճամիտ ուսումնասիրութեան մը մէջ մեզի կը տրուի նախ Եղիշէի տպա-

գրութեանց ցանկը: Այս ցանկին համա-ձայն՝ հնագոյնը ՌՄԺԳ (1764) ին Կ. Պո-լիս կատարուած է: Ասկէ վերջ վը ներկա-յացուին Եօթը ուրիշ հրատարակութիւն-ներ, իրենց բնագիրներուն աւելի կամ նը-ւազ արժէքաւոր ըլլալուն համար: Իսկ այն տպագիրները որոնք մասնաւոր ար-ժէք մը չեն ներկայացներ իբր բնագիր՝ հոս չեն ցուցակագրուած, այլ կը ներկա-յացուին հատորին վերջը, ընդհանուր մա-տենագիտութեան մէջ:

Այս տպագրութեան համար գործած-ուած են 17 ձեռագիրներ ՀՍՍՌ պետական ձեռագրատան: Ասոնց հնագոյնն է թիւ 1890 (1687), գրուած 1174ին Դաւիթ կրօ-նաւորէ, ի Կոչալանք: Երկրորդը՝ թիւ 1888 (1685), գրեալ 1207ին: Երրորդը՝ թիւ 4809 (1003), գրեալ 1310ին: Մնա-թիւ 16 եւ 17րդ դարու ձեռագիր-ներ, վերջի երկուքն ալ 18րդ դարու սկիզ-բէն: Այս ձեռագիրները բաժնուած են ի-րենց բնագրական յատկութեանց պատճա-ռաւ՝ երեք խումբերու:

Տէր-Մինասեան կը յիշէ նաեւ ուրիշ ձեռագիրներ: Ս. Ղազարի 1660էն ընտիր օրինակը, ինչպէս նաեւ 1664էն օրինակը: Կը յիշուին ուրիշ ձեռագիրներ ալ, որոնց-մէ մին 1130էն, Բաղէշի Ամրտօլու վանքը կը գտնուէր, եւ հատ մըն ալ Արմաշու վանքը՝ 1671էն: Երկու հատ ալ կը յիշուի Սաղէմի մեր վանքը, թիւ 308 (1616ին գը-րեալ), եւ թիւ 310՝ (1649ին գրեալ): Ե-րեւանի 1381 թուականէն օրինակ մը Խարբերդ, ԺԱ-ԺԲ թուականէն օրինակ մը՝ Լիմ ա-նապատ, Նոր Զուղայի հաւաքման մէջ՝ 1680էն, Կ. Պոլսոյ Աղգային Մատենադա-րանը՝ 1823էն եւն.:

Տէր-Մինասեան նկատի ունեցած է նա-եւ ՀՍՍՌ Պետական Մատենադարանի ձե-ռագիր ճառընտիրներու մէջ պահուած Ե-ղիշէի հատուածներ: Ընդամենը 28 ձա-ռընտիր:

Այսպէս խղճամիտ կերպով պատրաստ-ուած է Եղիշէի բնագիրը, մեզի տալով՝ ըստ կամս եւ ըստ հաճոյս կատարուած

սրբազրույթիւններէ զերծ եւ ըստ ձեռագրաց հարազատ բնադիր մը:

Զարմանալի է որ այս համեմատեալ բնադիրը ակնյայտնի սրբազրույթիւններ չընեն զանազան հրատարակութեանց վերայ: Ուրեմն պէտք է խորհիլ որ Եղիշէն զրիչներու ընդօրինակութենէն շատ չէ աղճատուած, եւ զրիչները առ հասարակ աւելի խղճամիտ եղած են Եղիշէն օրինակելու ատեն: Աւելի խղճամիտ՝ քան ժամանակակից մեր ուսումնասիրողները աւելորդ բնադիրն ու իմաստին հանդէպ:

Գործին կցուած է խիստ արժէքաւոր մատենագիտութիւն մը, կատարուած մեղուաջան վաստակաւոր եւ խոնարհ Յ. Ս. Անասեանէ, որ մեղի վրա տայ Եղիշէի ծանօթ 33 հրատարակութեանց ցանկը, աշխարհաբար 8 թարգմանութիւն, օտարալեզու թարգմանութիւնները՝ 7 հատ, Ռուսերէն, Անգլիերէն, Իտալերէն, Ֆրանսերէն հրատարակուած, իսկ Գերմաներէնը անտիպ մնացած (այժմ անծանօթ):

Վերջապէս Անասեան կու տայ Եղիշէի նուիրեալ գրականութիւնը, սակայն չեմ գիտեր ինչո՞ւ կը մոռնայ յիշել Հրանդ Բ. Արմէնի Մարգարանն ու Սպարապետը, որ անտարակոյս իրաւունք ունի Եղիշէի գրականութեան մէջ կարեւոր տեղ մը գրաւելու: Չէ յիշուած նոյն հեղինակին երկրորդ մէկ փոքր գործը՝ Քննադատները ջղայնացած են:

Կը փակենք Եղիշէի բնադիրն այս հատորը խորունկ զոհունակութեամբ, որ վերջապէս ունինք Եղիշէն գիտական տարազով: Ի սրտէ կը մաղթենք որ նոյնը կատարուի նաեւ մեր բոլոր հին պատմիչներուն համար:



ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ ԲՈՒԶԱՆԳԻՒՄ՝
ՅԻ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ: Գրեց՝ Յ. Ս.
Անասեան: Փոքր ութածալ, լաթա-

կազմ, էջ 150: Երեւան, 1957: Գին՝ 5
ռուբլի 60 կոպէկ:

Բեղնաւոր եւ կարեւոր բանասէրի մը շահեկան մէկ գործն է, որ աչքի առջեւ ունիմ: Փոքր է երկասիրութիւնը, սակայն արժէքաւոր:

Յաւալիօրէն չկան շատ աղբիւրներ պատմական այդ դէպքին մասին իբր ժամանակակից: Ատոնցմէ մին Արքահամ Անկիւրիացիի արդէն ծանօթ «Ողբ ի վերայ առման Կոստանդինուպոլսոյ» տաղն է, իսկ երկրորդը Առաքել Բաղիշեցիի կամ Պոռեցիի՝ Պոլսոյ առման Ողբը: Ատոնցմէ զատ կան ձեռագրաց մէջ յիշատակարանային վկայութիւններ եւ Երեմիայ Զէլէպիի դէպքէն շատ վերջ գրուած «Յանկումն Բիւզանդիոնի» երկար ոտանաւորը:

Անասեան ասոնք երեքն ալ խնամքով վը հրատարակէ, մանրամասն ծանօթագրելով: Կ'ընէ պատմական վերլուծումներ եւ արժէքաւորումներ:

Հեղինակը խիստ դնահատելի կերպով իր բնադիրն համար գործածած է Երեւանի ձեռագիրներէն համեմատեալ օրինակ մը: Կան ուրիշ ձեռագիր օրինակներ, որոնք բնական է անմատչելի մնացած են հեղինակին, ինչպէս իմ հին ձեռագրաց հաւաքածոյիս մէջ եւ անտարակոյս Վենետիկի, Սաղմիսի եւ Վիեննայի ձեռագրական մեր հաւաքածոներուն մէջ: Իսկ Երեմիայ Զէլէպիի տաղին համար միակ օրինակ մը ձեռքի տակ ունեցած է, որ է Պետ. Մատ. թիւ 1675 (1731-2 թուին գրուած):

Հատորիկին երկրորդ կէսը նուիրուած է նոյն աշխատութեան Ռուսերէն թարգմանութեան:

Զերմապէս դնահատելի է Անասեանի այս օգտաշատ հրատարակութիւնը:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ԼՈՒՐՏԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ

1958, Օգոստոս 5-8

Պիրէնեան լեռնաշղթային ստորոտը, բլուրներու զուարթ թափօրի մը մէջ, երազալագ զետակի մը արծաթեայ բաշերուն վրայ, շնորհներու սքանչելի ծխաւոր մըն է որ տարածած է Աստուածամայրը՝ հարիւր տարիէ ի վեր: Խոնարհ եւ անմեղունակ հովուհի մը, Պերնատէթ Սուպիրու, վկան է եղած Տիրամօր փառքին՝ երկնային տեսիլքներով. ու Մասապիէլի աննշան քարայրը, ուր կոխած է Անարատ Կոյսը, դարձած է հիմա տաճար եւ ուխտատեղի համաշխարհական, ուր կոյրերը կը տեսնեն, կաղերը կը Վաղեն, խուլերը կը լսեն, հաշմանդամները եւ անդամալոյծները յանկարծ կ'ոստոսեն: Հրաշագործ աղբիւր մը կարկաշտն, կանաչագեղ բլուրին կողմ ի վար թաւալելով՝ Աստուածամօր փառքը կ'երգէ անվերջ, եւ Բենդանութիւն կը բաշխէ ցամքած սրտերու, ծարաւի հողիներու:

Լո՛ւրտ... աննշան զիւղ մը երբեմնի, որու միակ ժառանգութիւնն էր բարձրահայեաց դղեակ մը միջնադարեան, դարձած է հիմա ժամադրամայր միլիոնաւոր ուխտաւորներու, որոնք աշխարհի չորս անկյուններէն կու գան՝ աստուածապաշտութեան եւ շնորհքի լոյսը ճաշակելու եւ զգալու մեր սուրբ հաւատքին գերագոյն ապրումները:

1958 տարին, դարադարձ Կալի ափին տեղի ունեցած զարմանահրաշ երեւումներուն, Սրբազան Քահանայապետին՝ հորդոյն Պիոս ԺԲ. Պապին կողմէ հրոշակուած էր Յորեմիական Տարի, հանգիստացած էր Յորեմիական Տարի, հանգիստացած էր համար այդ անգուղիսապէս ողբկոչելու համար այդ անգուղիսապէս յիշատակը. առիթ մըն էր ասիկա որ մարդկութիւնը բոլոր դիմէր Աստուածամօր սուրբ ոտքերուն՝ ճշմարիտ ապաշխարութեան հողիով հայցելու անոր քա-

ղեխօսութիւնը եւ հղօր միջնորդութիւնը, որպէսզի երկրիս վրայ ծագէր քրիստոնէական իսկական խաղաղութիւնը, արդարութեան արեգակին՝ նոյնինքն Քրիստոսի թագաւորական մականին ներքեւ:

Այս առիթով էր որ ազգային ուխտագնացութիւն մը կազմակերպուած էր տարւոյս Օգոստոսի սկիզբը, բարձր հովանաւորութեամբ եւ մասնակցութեամբ Ն. Վ. Տէրութեան Գրիգոր Պետրոս ԺԵ. Միւր. Աղաճանեան Կաթողիկոս Պատրիարքին:

Հայ ժողովուրդը քրիստոնէութեան առաջին դարերէն իսկ ջերմեռանդ եղած է Ս. Աստուածամօր. անոր սուրբ պատկերը հրաշագործ, առաքելներու ձեռքով մտած է Հայաստան. տօներ հաստատուած են հետզհետէ ի պատիւ Աստուածամօր, ուխտատեղիներ շինուած են. մեր լեռներուն պարիսպները՝ սրբատաշ վէժ դարձած՝ Աստուածամօր տաճարի վերածուած է. մեր հողերու բանաստեղծները գերզմայլ շարականներով դրուատած են անոր փառքը. եւ մեր ժողովուրդը յատուկ աշխարհ մը տուած է Ս. Աստուածամօր. նոյն մը տուած է Ս. Աստուածամօր. իսկուհի՛. այսինքն՝ իսկական Տիրուհի, որովհետեւ իսկական, ճշմարիտ մայրն է Քրիստոսի, որ Աստուած է եւ տէր երկնի եւ երկրի:

Բայց հայ ժողովուրդը այսօր ցրուած աշխարհի չորս ծայրը, կորսնցուցած է իր բնիկ տաճարներն եւ ուխտավայրերը, բնիկ տաճարներն անհետանալով հանդէսնելով երբեմնի սոնական հանդէսներու հողեպարար արարողութիւններէն, իսկական ծարաւ մը ունի Աստուածամօր ջերմեռանդութեան. ու մենք ակնատեսն վկաններն եղանք, Լուրտի մէջ, հայ ուխտաւորին արտասուախառն աղօթքին, ջերմեռանդ զգացումներուն, անխախտելի հաւատքին, գերզգայուն սիրոյն: